Հասցեատեր՝

«Նիկարմ ՖԱ» ՍՊԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ nikarm-fc@list.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-050
Խախտում՝	1. «Նիկարմ» թիմի տնօրեն Արմեն Խաչատրյանի կողմից մրցավարների հանդերձարան ներխուժելը, մրցավարների հասցեին սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1Ա, 32-րդ կետ) 2. «Նիկարմ» թիմի պաշտոնյա Վարդան Բալասյանի կողմից մրցավարների հանդերձարան ներխուժելը, մրցավարների հասցեին սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1Ա, 32-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խումբ
Խաղ՝	«Նիկարմ»-«Միկա» (1:3), 22.09.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 2-րդ հոդվածի 1 կետով, 4-րդ հոդվածի 1.5 ենթակետով և Հավելված 1 Ա, 32-րդ կետով՝ «Նիկարմ» թիմի տնօրեն Արմեն Խաչատրյանի կողմից մրցավարների

հանդերձարան ներխուժելու, մրցավարների հասցեին սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ թույլ տալու համար վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 25 (քսանհինգ) օրով մինչև սույն թվականի հոկտեմբերի 18-ը ներառյալ և «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:

2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 2-րդ հոդվածի 1 կետով, 4-րդ հոդվածի 1.5 ենթակետով և Հավելված 1 Ա, 32-րդ կետով՝ «Նիկարմ» թիմի պաշտոնյա Վարդան Բալասյանի կողմից մրցավարների հանդերձարան ներխուժելու, մրցավարների հասցեին սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ թույլ տալու համար վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 25 (քսանհինգ) օրով մինչև սույն թվականի հոկտեմբերի 18-ը ներառյալ և «Նիկարմ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- Եթե Ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգապահական միջոցը գումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին:
- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: